ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-584-08.05.2023-Ստ<-011/0*) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-584[1]-08.05.2023-Ստ<-011/0*) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակ	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-Ստ<-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**Առաջարկում եմ վերախմբագրել** նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանված Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրվում է հետեւյալ խմբագրությամբ. <<բուժաշխատող>> սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում, շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր, անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա ունեցող ֆիզիկական անձ>>: Այս ձեւակերպման արդյունքում «բուժաշխատող» համարվելու համար պարտադիր պայման է, ի թիվս այլնի, անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա ունենալը: Այս կապակցությամբ նշենք, որ **միջին բուժաշխատողներն,** լիցենզիա չունենալու	Ընդունվել է: 19-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ **«19) բուժաշխատող՝** սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում, շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր, սույն օրենքով նախատեսված դեպքերում անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ.».	Ընդունվել է:

		հիմքով դուրս են մնում «բուժաշխատող» հասկացությունից: Հատկանշական է, որ «բուժաշխատող» հասկացությունից դուրս են մնում նաեւ **կրտսեր բուժաշխատողները,** քանի որ, ի տարբերություն գործող Օրենքով սահմանված հասկացության, «բուժաշխատող» հասկացության մեջ այլեւս ընդգրկված չեն ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող անձինք:		
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-Առհ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**Առաջարկում եմ** նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ կետում <<հանել>> բառը փոխարինել <<ուժը կորցրած ճանաչել>> բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը եւ 36-րդ հոդվածի կարգավորումները:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-Առհ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**Առաջարկում եմ** նախագծի նոր լրացվող 5⍰1-րդ գլխում նախատեսել հոդված՝ Անհատական լիցենզիա ստանալու համար ավագ բուժաշխատողը որ մարմնին է դիմում ներկայացնելու, դիմումի հետ ինչպիսի փաստաթղթեր են անհրաժեշտ լինելու, դիմումի ընդունումից հետո ինչ ժամկետում պետք է նշանակվի քննությունը, ով է կազմում քննական թեստերը: Ինչ քայլեր են արվելու երբ ավագ բուժաշխատողը չի կարողանում հանձնել քննությունը /պարզ չէ, թե ինչ գիտելիքների, ինչ շեմ հաղթահարելու արդյունքում ավագ բուժաշխատողին կտրամադրվի լիցենզիա/: Պարզ չէ, թե քննությունը չհանձնելու համապատասխան միավորներ չհավաքելու դեպքում ինչ կարգավիճակ է ստանալու բուժաշխատողը, և որքան ժամանակ կարող է գործել այդ կարգավիճակով: **ԱՅՍ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**	Ընդունվել է ի գիտություն: Նշված հարցերի վերաբերյալ կարգավորումները նախատեսվում է սահմանել ենթաօրենսդրական ակտերով:	Ընդունվել է:

		ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՕՐԵՆՔԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՐՑԵՐ ԵՆ:		
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-Առհ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՄ Նախագծի անցումային դրույթներում ավելացնել դրույթ՝ «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երրորդ ամսվա 1-ից գործող ավագ բուժաշխատողները համարվում են լիցենզավորված:»:** **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ:** Համաձայն 2020 թվականի վիճակագրական տվյալների, ԱԱՊ օղակում ավագ բուժաշխատողների թիվը կազմում է 5410, իսկ հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններում ավագ բուժաշխատողների թիվը կազմում է 4981: Ըստ նախագծի անցումային դրույթների, ստացվում է, որ 5410+4981=10391 բուժաշխատողներ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը պետք է լիցենզավորվեն: Այսինքն, ավագ բուժաշխատողները դարձել են ավագ բուժաշխատողներ խաղի ներկայումս գործող կանոններով, սահմանելով խաղի նոր կանոններ մենք վատթարացնում ենք նրանց կարգավիճակը: Նշված **հակասահմանադրականությունը բացառելու համար՝** նախագծի անցումային դրույթներով նպատակահարմար եմ համարում սահմանել, որ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝	Ընդունվել է ի գիտություն:	Ընդունվել է:

		մասնագիտական գործունեություն իրականցնող ավագ բուժաշխատողները կարող են շարունակել աշխատել առանց անհատական լիցենզիա ստանալու, եթե իրենք կամավոր չեն դիմել այդ լիցենզիան ստանալու համար, կամ էլ սահմանել, որ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը մասնագիտական գործունեություն իրականցնող ավագ բուժաշխատողներին անհատական լիցենզիաները տրվում են օրենքի ուժով: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը մասնագիտական գործունեություն իրականացնող բուժաշխատողներից, իրենց գործունությունը շարունակելու համար պահանջվելու է անհատական լիցենզիա, քանի որ դրա բացակայության դեպքում նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերը լուծվելու են (կամ էլ, լավագույն դեպքում, ըստ Նախագծի 4-րդ հոդվածի տերմինաբանության՝ անորոշ ժամկետով, անորոշ պայմաններով եւ անորոշ ապագայով դադարեցվելու են աշխատանքային հարաբերությունները): Բացի դրանից, ուսումնական հաստատությունը նոր ավարտած շրջանավարտը եւ աշխատանքի մեծ փորձ ունեցող բուժաշխատողները դրվելու են նույն հարթության վրա:		
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-ԱոՀ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Առաջարկում եմ վերանայել նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը: Նախագծով առաջարկվող հետևյալ դրույթը՝ 9) դադարեցնել անհատական մասնագիտական գործունեության իրականացումը, օրենքով սահմանված կարգով լուծել անհատական լիցենզիա կամ անցումային անհատական լիցենզիա չունեցող անձի, ինչպես նաեւ միջին բուժաշխատող հանդիսացող եւ ՇՄՀ	Ընդունվել է: Նախագծերի փաթեթում ներառված է եղել Աշխատանքային օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ ևս, սակայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը արդեն նախաձեռնել էր նման	Ընդունվել է:

		հավաստագիր չունեցող անձի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կամ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից՝ ՉԻ ԳՈՐԾԵԼՈՒ, քանի որ Աշխատանքային օրենսգրքում աշխատանքից ազատելու այդպիսի հիմք նախատեսված չէ: Եթե պահպանվելու է նշված դրույթը, ապա անհրաժեշտ է զուգահեռաբար **ՀՀ Աշխատանքային օրենսգրքում** ավելացնել նոր՝ «Հոդված 120՝1՝Աշխատանքային պայմանագրի լուծումը աշխատողի՝ որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից զրկվելու դեպքում»՝ կարգավորելով նշված դեպքում աշխատանքային պայմանագրի լուծման հարցերը:	նախագիծ, որը այս պահին գտնվում է շրջանառության մեջ, դրա համար սույն փաթեթում չի ներառվել: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի 1-ին մասը լրացնել նոր 14-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «14) մասնագիտական գործունեությունը շարունակելու համար օրենքով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում՝ աշխատողի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում փաստաթղթերը չներկայացնելու հաջորդ օրվանից:»:	
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-ԱոՀ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի անցումային դրույթները հետևյալ տեսանկյունից՝ նախագծի 11-րդ հոդվածի՝ (անցումային դրույթներ) 3-րդ մասում սահմանվում է, որ անհատական լիցենզավորման գործընթացի մեկնարկը սկսվում է 2024 թվականի հոկտեմբերի 15-ից: Իսկ անհատական լիցենզիա ստանալու նախապայման է ՇՄՁ հավաստագիր ունենալը, այսինքն՝ ավագ բուժաշխատողները 2024 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը պետք է հավաքած լինեն առնվազն 220 կրեդիտներ: Քանի որ ՇՄՁ կրեդիտները ավագ բուժաշխատողները սկսելու են հավաքել 2023 թվականի հունվարի 1-ից	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, անհատական լիցենզավորման համար ժամկետ է սահմանվել 2027 թվականի հունվարի 1-ը:	Ընդունվել է:

		մինչև 2028 թվականի հունվարի 1-ը, հնարավոր է, որ նրանք 2024 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը դեռ չունենան կրեդիտների համապատասխան անհրաժեշտ քանակ ՇՄՋ ստանալու համար: Հնարավոր է նաև, որ նրանք լիցենզավորվեն 2026 թվականի հունվարի 1-ից հետո, սակայն 2028 թվականին ՇՄՋ կրեդիտներ չհավաքեն և ՇՄՋ հավաստագիր չստանան: Առաջարկում եմ վերը նշված դեպքերի համար տալ հստակ օրենսդրական կարգավորումներ:		
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-584-08.05.2023-Առհ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 2-րդ հոդվածով լրացվող անհատական լիցենզիայի գաղափարը, համադրելով այն շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր հասկացության հետ: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Նախագծի 2-րդ հոդվածում արձանագրված է «22.1) անհատական լիցենզիա՝ ավագ բուժաշխատողի՝ առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն: Իսկ գործող «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 37-րդ կետում սահմանված է 37) շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր՝ բուժաշխատողի ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ հավաքելու և վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում: Համադրելով այս երկու հասկացությունները	Ընդունվել է ի գիտություն: Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 22.1-ին կետով սահմանված է՝ անհատական լիցենզիա՝ ավագ բուժաշխատողի՝ առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն: Իսկ 2-րդ հոդվածի 2-րդ 2-րդ մասով վերանայվել է ՇՄՋ հավաստագրի սահմանումը՝ հետևյալ ձևով՝ «37) ավագ բուժաշխատողի անհատական լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ, սույն օրենքով նախատեսված դեպքերում, շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ	Ընդունվել է:

		նկատում ենք, որ ավագ բուժաշխատողի համար և՝ ՇՄՋ հավաստագրումը և՝ լիցենզավորումը ավագ բուժաշխատողին տալիս են մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունք: Հետևաբար, ավագ բուժաշխատողները միևնույն մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունքը ստանալու երկու տարբեր գործընթացներով են անցնելու և մասնագիտական գործունեության իրավունքի ձեռքբերման կրկնություն է առաջանում:	(այսուհետ՝ ՇՄՋ կրեդիտներ) հավաքելու և վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու փաստը հավաստող փաստաթուղթ, իսկ միջին բուժաշխատողների համար՝ ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում ՇՄՋ կրեդիտներ հավաքելու և վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում.»:	
Նարեկ Զեյնալյան	«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-584[1]-08.05.2023-Առ<-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	**Առաջարկում եմ** «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող անհատական և անցումային անհատական լիցենզիաների համար նախատեսված դրույթաչափերը վերանայել: Մասնավորապես անհատական լիցենզիայի համար ոչպես պետական տուրք սայմանել 6000 ՀՀ դրամ, իսկ անցումային անհատական լիցենզիայի համար՝ 3000 ՀՀ դրամ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: